ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՈՒՐՋ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Հ.

Օսմանյան պետական գործիչ Ֆուադ փաշան իր մահից առաջ (1814-1869 թթ.) գրած հիշատակագրում ահազանգում է. «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է»: Թուրք պետական գործիչը նկատի ուներ կայսրության հպատակ ժողովուրդների ինքնորոշման ձգտումները և դրանց գործնական դրսևորումները՝ ազատագրական պայքարի ձևով: Նրան կասկած էր ներշնչում նաև հայերի կեցվածքը՝ «իբր հետևանք Հայոց Սահմանադրական վեճերուն, Զեյթունի ապստամբության և այլ կարգ դեպքերու»[1]: Նա մտահոգված էր կայսրության ամբողջականությունը պահպանելու խնդրով և օսմանիզմի դրույթներից ելնելով՝ դրա միակ և արդյունավետ լուծումը տեսնում էր հպատակ ժողովուրդներին թուրքական զանգվածի հետ ձուլելու մեջ: Դրա նախընտրելի միջոցը հպատակ ազգերին իրենց դարավոր ավանդույթներից, եկեղեցուց և կրոնից, ազգային լեզվից հեռացնելն էր, որը, իր հերթին, իրականացվելու էր կայսրության բոլոր ժողովուրդների միջև աշխարհիկ քաղաքացիական նոր հարաբերությունների ստեղծումով: Ընդսմին, այս գործընթացը պետք է ուղղվեր հպատակ քրիստոնյաների եկեղեցիների ամեն մի մերձեցման դեմ:

Ըստ Ֆուադ փաշայի կտակի, նախ՝ «Բ. Դուռը երբեք ձգելու չէ, որ հայերը հույն եկեղեցիին հետ միանան, ընդհակառակը, թերևս իմաստությամբ վարված կըլլա, եթե քաջալերե իր ժողովուրդներուն մեջ այն փիլիսոփայական ոգին, որ զանոնք *կղերին* ազդեցութենեն ազատ կընե և իրարու կը մոտեցնե: Ներքին գործերու մեջ մեր բոլոր ջանքը միմիայն մեկ նպատակի մը ձգտելու է, որ է զանազան ցեղերու ի մի ձուլումը … Ասկե հետո այս մեծ կայսրությունը ո՛չ հույներուն, ո՛չ սլավներուն կրնա վերաբերել, ո՛չ մի կրոնքի և ո՛չ ալ մեկ ցեղին»[2]: Այսինքն, այս՝ առաջին հայացքից հավասարության գաղափարներ հռչակող հիշատակագիրը ուղղված էր հօգուտ օսմանիզմի գաղափարների ամրապնդման և հետապնդում էր միակ, թափանցիկորեն առաջ տարվող գաղափարը՝ բոլոր ազգերին լուծել օսմանցիների մեջ՝ նրանց համարելով «մարդկային հին բաժանումներու դժբախտ մնացորդներ, որոնք նոր աշխարհակալի մը որս, մարդկային ցեղին հառաջադիմության վտանգավոր ըլլալե զատ ուրիշ բանի մը չեն ծառայեր»[3]:

Ֆուադ փաշային մասնավորապես անհանգստացնում էին հայերը, որոնք «թշնամական կերպարանք մը առնել սկսած են», իսկ այսպիսի վտանգը չեզոքացնելու նպատակով նա առաջարկում էր ասպարեզ տալ միայն նրանց, ովքեր ընդունում են կայսրության ձուլման սկզբունքները: Այսպիսով, օսմանյան հպատա-

---

[1] **Ալպոյաճյան Ա.,** Պատմութիւն Մալաթիո հայոց, Պեյրութ,1961, էջ 1107:

[2] Նույն տեղում, էջ 117-1108:

[3] Նույն տեղում, էջ 1108:

կության մասին 1869 թ. ընդունված օրենքով խոստացած իրավահավասարությունը, անկախ ազգային կամ կրոնական պատկանելությունից, ոչ թե մարդկանց իրավունքների հռչակում էր, այլ հպատակ ազգերի օսմանացման սկզբունքներ, օսմանիզմի դոկտրինա, որով ոչ մուսուլման ազգերը պետք է բռնեին օսմանցիների, ըստ էության՝ թուրքերի վերածվելու ուղին:

Թանզիմաթի շրջանում (1839-1871 թթ.) տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումները հիմնավորված էին օսմանիզմի դոկտրինայով (օսմանլըլըք), որը ձևավորվեց XIX դ. կեսերին և Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ առաջ էր քաշում միասնական ընդհանուր հայրենիքի գաղափարը մուսուլմանների և քրիստոնյաների համար: Հատկանշական է, որ այդ դոկտրինան ձևավորվել էր պաշտոնական շրջանակներում և քարոզվում էր կառավարության կողմից: Խորքում ունենալով թուրք մահմեդականության գերակայության նպատակը՝ օսմանիզմը փորձում էր դրան հասնել քաղաքացիական հավասարության քարոզչության ձևով՝ բոլոր թուրքահպատակների համար, այնպիսի մի պետության տարածքում, որտեղ դարեր շարունակ ապրում էին իսլամի կանոններով և նորմերով: Կառավարությունը, ղեկավարվելով 1839 և 1856 թթ. բարեփոխումների հրովարտակներով, ջանքեր էր գործադրում այդ հրովարտակներով հռչակած պարտավորությունների կատարման ուղղությամբ: Բնակչությունը, սակայն, չէր ընդունում բարեփոխումները և չէր աջակցում դրանց: Մուսուլմանները թշնամաբար դիմավորեցին այդ հրովարտակներով հայտարարված հավասարությունը, և կայսրության մի շարք շրջաններում տեղի ունեցան հակակառավարական զինված ելույթներ ու քրիստոնյա հպատակների ջարդեր: Կարելի է ասել՝ թանզիմաթը միջնադարյան թեոկրատիկ պետության վերակազմավորման առաջին փորձն էր՝ եվրոպական եղանակով: Օսմանյան կայսրությունը ստանձնել էր պետության եվրոպականացման կուրսը, որը սկիզբ էր առել դեռևս XVIII դ. և շարունակվեց մինչև 1878 թ. Աբդուլ Համիդի իշխանության գալը: Աբդուլ Համիդի դարաշրջանը (որը հայտնի է որպես «զուլումի»՝ բռնապետության շրջան) և նրա կողմից վարվող քաղաքականությունը ստացան գաղափարական այլ հիմնավորում: Օսմանիզմի պաշտոնական դոկտրինան, լինելով ոչ այնքան արդյունավետ, փոխարինվեց պանիսլամիզմի գաղափարախոսությամբ:

Եթե 1839 թ. հաթթը շերիֆը, որի հեղինակն էր Ռեշիդ փաշան, կազմված էր անգլիական ազդեցության ներքո, ապա 1856 թ. հաթթը հյումայունը մշակվեց Ալի փաշայի կողմից՝ անգլիական և ֆրանսիական դեսպանների մասնակցությամբ, որոնց պնդմամբ էլ այն ընդգրկվեց Փարիզի դաշնագրի 9-րդ հոդվածում: Օտարերկրյա «խնամակալության» մասին վկայում էր այդ նոր ֆերմանի գլխամասը. «Իմ բարձրագույն իշխանության օգոստոսափայլ իրավունքները, որոնք Ալլահի ողորմածության շնորհիվ նոր լուսաբանում ստացան բոլոր իմ հպատակների գովելի ջանքերի միջոցով, և նույնպես շնորհիվ մեծ տերությունների՝ իմ խիզախ դաշնակիցների հոգատարության և մեծահոգի աջակցության, ինձ դրդում են բոլոր հնարավոր միջոցներով նպաստել երկրի հզորությանը և բարգավաճմանը, ինչպես նաև

իմ բոլոր հպատակների բարեկեցությանը, որոնք միմյանց հետ կապված են հայրենասիրության սրտալի կապերով և հավասար են մեր առջև»[4]:

Ռեշիդ փաշան մեղադրում էր Ալի փաշային, քանի որ 1856 թ. հաթթը հյումայունով վերջինս հատուկ արտոնություններ էր տալիս քրիստոնյաներին: 1839 թ. հրովարտակի որոշ դրույթներ իրենց հետագա զարգացումը ստացան Ալի փաշայի հրովարտակում. «Կրոնական բոլոր արտոնությունները՝ իմ նախնիների կողմից շնորհված կայսրությունում հաստատված բոլոր քրիստոնյա և այլ ոչ մուսուլման համայնքներին, կհաստատվեն»[5], հռչակվում էր հավասարություն բոլոր օսմանահրպատակ ժողովուրդների համար՝ կրթության, զինծառայության, հարկահանության ոլորտներում: Ոչ մուսուլմանները վարչական և դատաիրավական պաշտոններ ստանձնելու դեպքում պետք է օգտվեին հավասար իրավունքներից: Բոլոր թուրքահպատակներին թույլատրվում էր զբաղեցնել պետական պաշտոններ, ուսուցանել քաղաքացիական և ռազմական դպրոցներում: Հրովարտակը հռչակում էր նաև խառը դատարանների ստեղծումը: Հայտարարվում էր ոչ միայն իրավունքների, այլ նաև պարտականությունների հավասարություն, օրինակ՝ զինծառայության բնագավառում: 1856 թ. հաթթի հռչակումը պայմանավորված էր երկրի քաղաքական, տնտեսական, նաև սոցիալական իրավիճակով. «Ղրիմի պատերազմից հետո ի հայտ եկան ներքին՝ տնտեսական, սոցիալական և քաղաքական նոր գործոններ, որոնք պահանջում էին շարունակել սուլթան Աբդուլ-Մեջիդի՝ 1839 թ. Գյուլհանեի հաթթը շերիֆով հայտարարված բարենորոգումները»[6]:

Ժողովրդական լայն զանգվածների սնանկացումը, երկրի տնտեսական ծանր կացությունը, պետական բյուջեի սակավությունը գանձվող հարկերի քանակի նվազման պատճառով, ինչը իր հերթին Թուրքիային ֆինանսական կախվածության մեջ էր դնում Անգլիայի և Ֆրանսիայի կապիտալից, այս ամենից բխող՝ բնակչության դժգոհությունը և որպես վերջինիս հետևանք՝ ազգային-ազատագրական պայքարի աճը թելադրում էին բարենորոգումների անհրաժեշտությունը: Ուժեղանում էր նաև արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի ճնշումը սուլթանի և Բ. Դռան վրա: Եվ 1856 թ. հաթթը այս ներքին և արտաքին գործոնների առկայության արձագանքն էր:

1856 թ. հրովարտակը ներքին վերափոխումների լայն ծրագիր էր, որտեղ առաջին անգամ տեղ էին գտել ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական հիմնախնդիրներ. նախատեսվում էր պետականորեն խրախուսել ճանապարհների և ջրանցքների կառուցումը, առևտրի և բանկային գործի զարգացումը:

Հարկ է նշել, որ Ղրիմի պատերազմից հետո Օսմանյան կայսրության ներքին քաղաքականությունը և բարեփոխումները այնքան սերտորեն էին կապված արտաքին քաղաքականության հարցերին, որ կազմում էին միասնական ամբողջություն: Օրինակ, սկսած այդ ժամանակներից՝ օսմանահպատակ քրիստոնյաների

---

[4] **Фадеева И. Л.**, *Официальные доктрины в идеологии и политике Османской империи (XIX в. – нач. XX в.), М., 1985, с. 63.*

[5] Նույն տեղում:

[6] **Новичев А. Д.,** *История Турции, IV. Новое время, ч. 3 (1853-1879), Л., 1978, с. 82.*

դրության հարցը մշտական քննարկումների առարկա էր դարձել միջազգային կոնֆերանսներում և միաժամանակ առիթ էր տերությունների համար՝ Օսմանյան կայսրության գործերին միջամտելու[7]:

Ձեռնարկված բարենորոգումների շնորհիվ որոշ չափով բարելավվեց ոչ մուսուլմանների դրությունը, սակայն քրիստոնյաները դարձյալ տառապում էին օսմանյան պետական համակարգի արատներից, տեղային վարչակազմի կամայականություններից, հարկահանության չարաշահումներից և այլն: Նշված շրջանում բավական ծանր էր երկրի տնտեսական վիճակը: Օսմանյան կայսրությունը գյուղատնտեսական հետամնաց երկիր էր՝ «գյուղատնտեսության բնագավառում արտադրողական ուժերի խիստ ցածր զարգացածությամբ»[8]: Հողի մեծ մասը տնօրինում էին իսլամ խոշոր հողատերերը՝ կեղեքելով այլահավատ գյուղացիությանը: «Հողի մեծ և լավագույն մասը վարձակալության էին տալիս գյուղացուն՝ բնավարձակալական հիմունքներով: Այդ համակարգը խիստ արգելակում էր գյուղատնտեսության զարգացումը»[9]: Հողատերը պետությանը հարկեր վճարելուց հետո հողից ստացված բերքը կիսում էր վարձակալ գյուղացու հետ, որը սեփական միջոցներով էր մշակում հողը, այսինքն՝ կողոպտում էր գյուղացուն: Գյուղատընտեսության զարգացմանը խոչընդոտում էր նաև երկրի հարկային համակարգը, որը մեծ վերափոխումների կարիք ուներ:

Օսմանիզմի առաջադրումների իրականացումը, որ ենթադրում էին արմատական վերափոխումներ, չէին կարող պսակվել հաջողությամբ, քանզի անհրաժեշտ էր հաշվի առնել հոգեբանական մի կարևոր գործոն՝ օսմանցիների բարքերը, մտածելակերպը, սոցիալական պայմանները, նրանց ավանդական դաստիարակությունը: 1867 թ. Ֆուադ փաշան այս առիթով մի հետաքրքիր պարզաբանում արեց՝ փորձելով եվրոպական պետություններին բացատրել, թե ինչու չիրականացվեցին 1856 թ. հրովարտակով հռչակված վերափոխումները. «Հնարավոր չէր իրականացնել բարքերի բարեփոխումներ»[10]: Սակայն հատկանշական է, որ դրանից առաջ փորձ էլ չի արվել իրականացնելու սեփականատիրական հարաբերությունների և դրանք սրբագործող ինստիտուտների փոքրիշատե լուրջ բարեկարգում:

1856 թ. հրովարտակը գործնական շոշափելի նշանակություն չունեցավ Օսմանյան կայսրության ինչպես քրիստոնյա, այնպես էլ մուսուլման բնակչության համար: Եթե 1839-ի և 1856-ի հրովարտակները որոշ հույսեր էին ներշնչում քրիստոնյաներին՝ իրենց վիճակի բարելավման հարցում, ապա այդ հրովարտակներով հայտարարված հավասարության սկզբունքը մեծ դժգոհություն առաջացրեց մուսուլմանական մոլեռանդությամբ թմրած օսմանցիների շրջանում,

---

[7] Նույն տեղում, էջ 77:

[8] **Гасратян М. А., Орешкова С. Ф., Петросян Ю. А.,** *Очерки истории Турции, М., 1983, с. 114.*

[9] Նույն տեղում, էջ 115:

[10] Նույն տեղում:

քանզի այն ոտնձգություն էր դարերով սրբացված այն դրույթի հանդեպ, որ քարոզում էր մուսուլմանների գերազանցությունը «անհավատների» նկատմամբ: Դարեր ի վեր այս դրույթի վրա էր հիմնված օսմանյան պետության հզորությունը, սա էր նրա կենսական ուժի աղբյուրը:

Հայտնի է, որ 1856 թ. հաթթով արծարծվում էին օսմանյան հասարակության համար կարևորագույն նշանակություն ունեցող երեք հիմնախնդիրներ. 1) կյանքի, պատվի և գույքի լիարժեք անվտանգություն, 2) հարկերի բաշխման և գանձման միջոցների կարգավորում, 3) զորակոչի, զինծառայության ժամկետի հաստատման կանոններ: Այս բոլոր խնդիրների լուծումը անհրաժեշտ էր պետության և հպատակների բնականոն փոխհարաբերությունների ոլորտը կարգավորելու հարցում: Չափազանց կարևոր էր հարկերի գանձման հարցը, քանզի հարկերը կազմում էին պետական բյուջեի լրացման հիմնական աղբյուրը, իսկ օսմանահպատակ քրիստոնյաներից գանձվող հարկերը առավել մեծ տեղ էին գրավում բյուջեում:

Այս հրովարտակում առաջին անգամ հարց էր բարձրացվում երկրի բոլոր շրջաններից և ողջ բնակչության համար զորակոչ հաստատելու անհրաժեշտության մասին: Վերջինս օսմանիզմի գաղափարների կարևորագույն մասն էր կազմում, քանի որ դոկտրինան հռչակում էր իրավունքների և պարտականությունների հավասարության գաղափարը: Կարևոր էր օսմանյան բանակում քրիստոնյաների ծառայության հարցը: Մինչև 1839 թ. հաթթը շերիֆի հռչակումը ռայաները, ղուրանի համաձայն, իրավունք չունեին մասնակցելու սուրբ պատերազմին (ջիհադին), զինծառայության փոխարեն քրիստոնյաները զինվորական հարկ էին վճարում (բեդելը ասկերիյե): Բայց հաթթը շերիֆի հրովարտակը բացառում էր այս ավանդույթի պահպանումը: Այս խնդիրը կայսրության այն կնճռոտ հարցերից էր, որի լուծումը Բ. Դուռը չէր կարողանում գտնել: Քրիստոնյաները իրենց հերթին գերադասում էին հարկ մուծել պետությանը՝ բանակում ծառայության փոխարեն: Մինչ հաթթը շերիֆի հրապարակումը 1839 թ. կազմավորվել էր Հասարակական օգուտի հանձնաժողով, որի հիմնական խնդիրն էր կրթության բնագավառի կազմակերպումը: Օսմանյան կառավարությունը, իր հերթին, քննարկում էր մուսուլմանների հետ մեկտեղ քրիստոնյաներին պետական ուսումնական հաստատություններում ընդգրկելու հարցը:

Քրիստոնյաների կացության խնդիրը Օսմանյան կայսրությունում շարունակում էր մնալ Արևելյան հարցի կարևորագույն և բաղկացուցիչ մասը, և մեծ տերությունները ճգնաժամային ծանր պահերին վերադառնում էին դրան: Ղրիմի պատերազմը մեծ փորձություն եղավ թուրք կառավարության համար՝ ամենից առաջ տերություններից նրա կախումը մեծանալու իմաստով: Ղրիմի պատերազմից հետո Օսմանյան կայսրության ներքին քաղաքականությունը և բարեփոխումները անբաժանելի էին արտաքին քաղաքականության հիմնախնդիրներից: Եվ կայսրության քրիստոնյա ժողովուրդների կացության հարցը, սկսած այս շրջանից, դարձավ միջազգային վեհաժողովների և կոնֆերանսների քննարկման առարկա: Այն հարմարագույն առիթ էր Օսմանյան Թուրքիայի գործերին միջամտե-

լու համար: Ղրիմի պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության դաշնակիցները պայքարում էին հանուն բարենորոգումների, որոնք պիտի հիմնված լինեին եվրոպական աշխարհիկ սկզբունքների վրա: Իսկ այս հրովարտակը աչքի էր ընկնում հենց աշխարհիկ մտածողությամբ, ինչը ավելի թույլ էր արտահայտված 1839-ի ֆերմանում:

Ֆերմանով նախատեսված բարեփոխումների ծրագրի կարևոր փուլերից էր համայնքների՝ միլեթների վերակազմավորումը, ինչը համապատասխանում էր եվրոպական քաղաքացիական սկզբունքներին և, մյուս կողմից, պիտի նպաստեր օսմանիզմի դոկտրինայի հաջողությանը: Վերջինս, իր հերթին, պիտի վերջ տար կրոնական հակասություններին՝ հօգուտ օսմանյան «եղբայրության» հաստատման, այլ կերպ ասած՝ կայսրության միավորման (կոնսոլիդացիայի)՝ օսմանիզմի հիմքի վրա: Միլեթների բարեփոխումը ավելի էր նպաստելու պետության անջատմանը կրոնից և հանգեցնելու էր աշխարհիկ օրենսդրության ընդունմանը, աշխարհիկ վերահսկողության ընդլայնմանը, որը կսահմանափակեր հոգևոր իշխանությունը: Միլեթների վերակազմավորման փորձը պետք եկավ հենց թուրքերին՝ 1876 թ. սահմանադրության մշակման հարցում: Ինչպես արդեն նշվել է, 1862-1863 թթ. հրապարակվեց Օրգանական ստատուտը (հպատակ համայնքների ներսում կառավարման կանոնադրությունը), որը նվազեցրեց հոգևորականության իշխանությունը և ընդլայնեց աշխարհիկ սկզբունքների կիրառումը հույն-ուղղափառ և հայ-առաքելական համայնքներում, իսկ օսմանահպատակ հրեաները այդպիսի կանոնադրություն ստացան 1865 թ.: Ինչի՞ց էր բխում միլեթների վերակազմավորման անհրաժեշտությունը: Կրոնական հակասությունները շտկելուց բացի, կառավարությունը դրանով փորձում էր իրագործել հպատակների ընդհանուր քաղաքացիության և իրավահավասարության խայծը, որ, ի վերջո, հետամտում էր օսմանիզմի հիմքերի վրա հպատակ ազգերի միաձուլումը մահմեդականության մեջ:

Միլեթների վերակազմավորումը ինչ-որ չափով ենթադրում էր չարաշահումների սահմանափակում և Բ. Դռան հետ միլեթների փոխհարաբերությունների բարելավումը, սակայն դրան հետամտող քայլերն ավելի ընդգծեցին Օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների միասնության բացակայությունը և ժողովուրդների կրոնական տարանջատումները:

Այնուամենայնիվ, թանզիմաթը խթանեց օսմանահպատակ ոչ մուսուլման ժողովուրդների ազգային զարգացումը, ինչն անխուսափելիորեն տանում էր դեպի ազգային ինքնորոշման գաղափարը: Վերջինիս ելակետերից մեկն էր աշխարհիկ տարրի ուժեղացումը ոչ մուսուլմանական համայնքներում: Լուսավորական հոսանքը Եվրոպայից թափանցում էր նաև Օսմանյան կայսրություն և արագ տարածվում այնտեղ հույների, հայերի և հրեաների մեջ: Թանզիմաթը հնարավորություն տվեց ոչ մուսուլման ազգերին մշակելու ազգային կանոնադրություններ: 1860 թ. մշակված Ազգային սահմանադրությունը (իրականում՝ կանոնադրությունը) խթանեց կրթության և գրականության զարգացումը հայոց լեզվով, որն իր հերթին նպաստեց մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցման

ձևավորմանը: Ելնելով ասվածից՝ կարելի է որոշ վերապահումներով մոտենալ Ռաֆֆու՝ Ազգային սահմանադրությանը տված գնահատականին: «Կ. Պոլսի ազգային սահմանադրությունն ուրիշ ոչինչ չէ եղել,- գրում է Ռաֆֆին,- բայց միայն մի մանկական խաղալիք, որ խորամանկ դայակը տալիս է երեխայի ձեռքում, որ նա հանգիստ մնա, որ նրանով զբաղվի, չարություն չգործի… Եվ Կ. Պոլսի տղայամիտ էֆենդիները շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին ողորմելի պատրանքը…»[11]: Այս տխուր եզրահանգումը Ռաֆֆին անում է Տաճկահայաստանում տիրող անիրավություններից ելնելով, ինչում նա մեղադրում է Կ. Պոլսի պատրիարքարանին և նրա սահմանադրական վարչությանը: Ռաֆֆին, ինչպես և Գր. Արծրունին ելնում էին ազգային ինքնորոշման պահանջներից, որպիսիք ոչ միայն լիովին անտեսված էին հայ համայնքի կանոնադրության մեջ, այլև սնուցանում էին այդ պահանջները իրականում բթացնող՝ ինքնավարության պատրանքներ: Արևմտահայ առաջադեմ գործիչներից Ստ. Ոսկանյանը, իր հերթին, հեգնում էր թուրքական լիբերալիզմի խոստումներով և սահմանադրական պատրանքներով տարված պոլսահայերին. «…Սահմանավոր պոլսեցիներե ետև,- գրում է նա,- կհամարձակինք իրեն (Ֆուադ փաշային - Հ. Գ.) երկար օրեր մաղթել, որ հաճեցավ վեզիրի դրոշմը հայերուն շնորհել առատ սիրտով և առատ միտքով… Գիտցողին այս դրոշմը թագ կարժե և պոլսեցի հայերը, մանավանդ, կստիպվին զայն հմայեկի պես կուրծքերուն վրա դրոշմել ու փառավորվիլ հացկերույթի երթալու ատեն»[12]: Այսուհանդերձ, Ազգային սահմանադրությունը, այս կամ այն տևականությամբ, կիրառվեց միայն Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Կարինի, Վանի և մի քանի այլ խոշոր հայաբնակ կենտրոններում, որ նպաստեց զարգացնելու մշակույթը, հիմնելու դպրոցներ, տպարաններ, ընկերություններ, հասարակական կարծիք պարունակող մամուլ և այլն: Արևմտահայաստանի ժողովրդի մեծ մասը անմասն էր մնում սահմանադրության ընձեռած հնարավորություններից, և այս տեսակետից կատարելապես ճշմարտացի էին և՛ Ռաֆֆին, և՛ Գր. Արծրունին ու «մշակական» ամբողջ ուղղությունը, նաև Ստ. Ոսկանյանը՝ հույժ ինքնատիպ այդ մտածողը: Իրավական և տնտեսական բնագավառներում սահմանադրությունը դույզն-ինչ չափով չբարելավեց հայերի կացությունը, այն չկարողացավ խանգարել Թուրքիայում բռնակալության ուժեղացմանը, որին դիմակայելու ցայտուն դրսևորումն էր 1862 թ. Զեյթունի հայտնի ինքնապաշտպանությունը:

Քրիստոնյաների առաջընթացին խոչընդոտում էր կրոնական դոգմաներով ապրող մուսուլմանների ճնշումը, որոնք չէին ընկալում պետության նոր հայեցակարգը: «Չնայած «*օսմանլը» (օսմանցի - Հ. Գ.)* տերմինը XIX դ. նշանակում էր քաղաքացիության գերազգային ձևակերպում, նրա իմաստը հասկանալի չէր ժողովրդական զանգվածներին, որոնց տեղեկությունները պետության մասին սահմանափակվում էին հարկահանների հետ շփումներով»[13]: Իհարկե, XIX դ. 40-

---

[11] **Ռաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1991, էջ 452:
[12] Արևմուտք, Փարիզ, 1864, N 1, էջ 2:
[13] **Фадеева И. Л.**, նշվ. աշխ., էջ 76:

60-ական թթ. բարեփոխումները ոչ թե արմատական, այլ վարչական բնույթի էին, ահա թե ինչու հետագայում սուլթան Աբդուլ Համիդ II-ին հաջողվեց հրաժարվել թանզիմաթի շատ ու շատ ձեռքբերումներից, բայց կարևորը և անժխտելին այն է, որ թանզիմաթի շնորհիվ սկսված՝ Օսմանյան կայսրության արդիականացման («մոդեռնիզացիայի») գործընթացը հնարավոր չէր կասեցնել: Այդ գործընթացը թուլացնում էր իսլամական ավանդույթների հիմքերը՝ փոխելով երկրի զարգացման ուղին: Ալի և Ֆուադ փաշաները ձևավորեցին Օսմանյան կայսրության քաղաքականությունը Ղրիմի պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում՝ ընդհուպ մինչև XIX դ. 70-ական թվականները: Ալի փաշան հակված էր կայսրության ամբողջականության գաղափարին, ինչը և կազմում էր օսմանիզմի դոկտրինայի կարևորագույն մասը: Բայց այս սկզբունքից անբաժան էր նաև մեկ այլ հարց՝ օսմանների առաջնային դերը կայսրության ղեկավարման գործում, քանի որ, հակառակ դեպքում, ըստ Ալի փաշայի, կառաջանար քաոս և քաղաքացիական պատերազմների անվերջանալի շղթա: Թանզիմաթի շրջանի պետական գործիչները կրթված մարդիկ էին և լավ էին հասկանում ու պատկերացնում եվրոպական քաղաքականությունը, Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների ազդեցության ուժը Օսմանյան պետության ներքին կյանքի վրա: Ալի փաշան կարևորում էր մի շարք գործոններ, որոնք օսմանահպատակ քրիստոնյաների հուզումների խթան էին դառնում, օրինակ, ֆրանսիական հեղափոխության հռչակած հավասարության սկզբունքը, նաև այնտեղ կրոնական խտրականության չգոյությունը: Արևելյան ավատատիրական ու կառավարման բռնակալական հիմքի վրա զուտ դոկտրինալ բնույթ պետք է ունենային օսմանյան հավասարության ու միասնության սկզբունքները: Եվ Ալի ու Ֆուադ փաշաները հայտնվեցին փակուղու առջև. իրական հավասարություն տալ քրիստոնյաներին՝ կնշանակեր վտանգել մուսուլմանների գերիշխանությունը: Այդ պատճառով էլ նրանք, պետության հիմքերը ամրապնդելու նպատակով, քարոզում էին մուսուլմանների և քրիստոնյաների միացյալ ուսուցումը, խառը դատարանների և քաղաքացիական օրենսդրության ստեղծումը՝ իբրև ազգերին միացնող միջոցներ, որոնք կկասեցնեին ազգամիջյան հակասությունները և դրանցից բխող վտանգները: Ալի փաշայի գործը փորձեց շարունակել Ֆուադ փաշան՝ նրա համախոհը: Երկուսն էլ ձգտում էին փրկել «վնասված նավը»՝ օսմանյան պետությունը, նրան սպառնացող վտանգից և մտահոգված էին կայսրության ճակատագրով: Ֆուադ փաշան երազում էր պետական ողջ համակարգի վերակառուցման մասին՝ քաջ գիտակցելով կայսրության ճգնաժամի պատճառները, որոնք թաքնված էին ողջ երկրի իրավունքի և քաղաքականության խորքերում: Թուրքիայի առաջընթացը պիտի հավասարվեր Եվրոպայի առաջընթացին, կարծում էր Ֆուադ փաշան, անհրաժեշտ էր վերանայել ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական հաստատությունները, բայց և այնպես Ֆուադ փաշան չէր կարող հրաժարվել ղուրանից, նրա դրույթներից, որոնք խոչընդոտում էին առաջընթացը և հակասում իրականությանը: Այս հարցում Ֆուադ փաշան, ինչպես նաև XIX դ. այլ բարեփոխիչներ, խորապես հարգում էր իսլամի դոգմաները:

Ինչպես արդեն նշվել է, Օսմանյան կայսրության ապագան նա պատկերացնում էր որպես «հսկա մի ագլոմերացիա», բազմազգ պետություն, առանց ցեղերի և կրոնի տարբերության. «Այսուհետև այս հսկա կայսրությունը չպիտի պատկանի ո՛չ հույներին, ո՛չ սլավոններին, ո՛չ էլ որևէ այլ ժողովրդի կամ կրոնի: Արեվելյան կայսրությունը կարող է գոյություն ունենալ միայն Արևելքի բոլոր ժողովուրդների միավորման պայմանով…»[14]: Միավորումը, հասկանալի է, տեղի էր ունենալու իսլամի հիմքի վրա՝ բացառապես թուրքական վերնաշենքային բնույթով, որը և մերժում էին այլադավան հպատակները:

Ալի փաշան, ինչպես նաև Ֆուադ փաշան, վերափոխումներ ձեռնարկելով, չէին կարող հասնել հաջողության, քանզի այդ ռեֆորմների սոցիալական հիմքերը շատ թույլ էին, պետական ատյաններում աշխատող չինովնիկները չէին համապատասխանում ժամանակակից եվրոպական կրթության նորմերին: Բարեփոխումները, հետապնդելով զարգացման նպատակներ, միաժամանակ ուղղված էին միապետության հիմքերի ամրապնդմանը: Հարկ է նշել, որ թանզիմաթը անցկացվում էր «վերևից», ավատատիրական բյուրոկրատիայի ամենահեռատես մասի նախաձեռնությամբ: Նրա ներկայացուցիչները, որքան էլ ջանան խորհրդային շրջանի որոշ պատմաբաններ նրանց հռչակել իբրև «յուրովի լուսավորիչներ»[15], հպատակ ազգերի ինքնորոշման հարցում մնում էին պահ-պանողական և հետադիմական՝ ճգնելով ամրապնդել օսմանների միապե-տությունը: Պատմական տեսակետից թանզիմաթը, այսուհանդերձ, համապատասխանում էր Օսմանյան Թուրքիայի եվրոպականացման պահանջներին՝ ստեղծելով վերջինիս համար թեկուզ և ոչ բավարար, բայց և «բարենպաստ հիմքեր»[16]:

1870-ական թթ. հայ հասարակական մտքի ներկայացուցիչները շարունակում էին բանավեճը օսմանիզմի դրույթների, հպատակ ազգերին բռնի ձուլելու թուրքական քաղաքականության դեմ, մանավանդ, արդեն հրապարակ էին իջել «նոր օսմանները» և սրանց համախոհ Միդհատ փաշան: Մ. Մամուրյանը նախապես ողջունեց Միդհատի՝ մեծ վեզիր նշանակվելը՝ նրանից ակնկալելով երկրում տիրող անարդարությունների դեմ պայքարողի գործելակերպ. «Այս ամեն անիրավությունները կվերանան, եթե Բ. Միդհատ փաշան պետության մեքենան կազմե, ինչպես որ կազմեց Թունայի և Պաղտատի կառավարությունները, երբ անոնց գլուխ էր»[17],- գրում է նա: Սակայն հենց նույն Միդհատն էր, որ 1872 թ. սեպտեմբերին հայոց պատրիարքարանից պահանջեց չգրել քաղաքացիական բնույթի (հարստահարությունների մասին) թագրիրներ՝ անտեսելով նրա իրավունքները: Մերժելով և՛ օսմանիզմի, և՛ «նոր օսմանների» մեծապետական գաղափարները՝ Մ. Մամուրյանը նշում էր, որ ժողովուրդները կարող են միանալ միայն ազատության ու իրա-

[14] Նույն տեղում, էջ 94:
[15] **Новичев А. Д.,** *История Турции, III. Новое время, ч. 2 (1839-1853), Л., 1973, с. 197.*
[16] Նույն տեղում, էջ 198:
[17] Արևելյան մամուլ, 1872, N 8, էջ 358:

վունքի, ինչպես և բարոյական ընդհանրությամբ և ոչ թե ազգերի իրավունքները ոտնակոխ անելով[18]: Օսմանիզմի մեծապետական, ազգերին մահմեդականացնելու դրույթներն էր հերքում նաև Ծերենցը՝ քննադատելով Ֆուադ փաշայի քամահրական վերաբերմունքը հպատակ ազգերի հանդեպ, որ նա արտահայտել էր իր կտակում[19]: Ծերենցը հատկապես մերժում էր թուրք պետական գործչի անհիմն նախապաշարմունքը՝ հպատակ ժողովուրդների՝ ինքնավարությամբ կառավարվելու հնարավորությունների և ընդունակության վերաբերյալ:

XIX դ. 70-ական թվականները նշանավորվեցին թանզիմաթից հեռանալու քաղաքականությամբ, արդեն չկային Ալի և Ֆուադ փաշաները, իսկ նրանց հետնորդները հրաժարվեցին օսմանիզմի դոկտրինայից՝ գտնելով, որ այն արգելակում է թուրքերի ազգային ինքնորոշման ձևավորումը: Սկսվում էր «նոր օսմանների» շրջանը, որոնք, ժառանգելով օսմանիզմի դրույթների՝ հատկապես ազգայնական տրամադրությունները, ազդեցիկ դեր ունեցան Թուրքիայի՝ XIX դ. 60-70-ական թվականներին սահմանադրության ստեղծման գործում:

О РЕФОРМАТОРСКОМ ДВИЖЕНИИ В ОСМАНСКОЙ ТУРЦИИ

АРУТЮНЯН Г. Г.

Резюме

Положение христиан в Османской империи составляло важную часть Восточного вопроса, и великие державы неоднократно возвращались к этой сложнейшей проблеме. В результате Крымской войны возросла зависимость Османской Турции от великих держав, чем и были обусловлены внутренняя политика Османской империи и проводимые ею реформы, которые в свою очередь оказались в прямой зависимости от ее внешней политики. Танзимат являл собой первую попытку реорганизации теократического государства по примеру европейских государств.

После Крымской войны союзники Турции боролись за проведение реформ в империи. Социально-экономические и политические преобразования эпохи Танзимата (1839-1871 гг.) подкреплялись доктриной османизма, сформировавшейся во второй половине XIX в. Она стала теоретической основой проведения в стране гражданских, административных и экономических реформ, которые предполагали абсолютное господство ислама над иными религиями и слияние иноверцев с мусульманами. Проповедуя идею единой родины, османизм тем самым выступал против освободительных устремлений и освободительного движения народов.

---

[18] Նույն տեղում, N 10, էջ 455:

[19] Մասիս, 27. I. 1872: